«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆ

ԹԵՄԱ Գրականության քննադատական մտածողության զարգացումը

ԱՌԱՐԿԱՆ Հայոց լեզու և հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Աստղիկ Սիմոնյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 3
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ.....15
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 15
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1 15
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2 16
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 3 17
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 17
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1 17
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2 18
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 3 19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը:

Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ:

Թեման խիստ արդիական է, քանի որ հանրակրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այսօր դպրոցն ունի առավել բարդ առաքելություն, այն է ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու ինչպես ուսումնական առարկաների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը և կոմպետենտ աշխատուժ է օրեցօր զարգացող աշխարհում:

Ես՝ որպես սկսնակ ուսուցիչ, դասապրոցեսի ժամանակ բախվում եմ մի շարք խնդիրների, որոնց հետազոտությունը մեծապես կնպաստի հնարավորինս արդյունավետ և ներգրավված դարձնել յուրաքանչյուր դասը:

Այն խնդիրները, որոնց ուզում եմ անդրադառնալ, դասարանի ոչ բոլոր սովորողների ներգրավվածությունն է դասապրոցեսին, սովորողների պասիվությունը, չհամագործակցելը միմյանց հետ, քննադատական և վերլուծական հմտությունների բացակայությունը: Կան սովորողներ, որոնք վախենում են սեփական կարծիքը հայտնել և եզրահանգումներ անել: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մեկ այլ դասարանում չաշխատել, օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ պասիվ են, որովհետև դժվարանում են համագործակցել:

Սույն աշխատանքի նպատակն է՝

1. գրականության դասերին զարգացնել քննադատական մտածողություն,
2. բոլոր սովորողներին ներգրավել դասապրոցեցին,
3. առաջացնել մոտիվացիա՝ կիրառելով ժամանակակից ՏՀՏ-ներ և համագործակցային մեթոդներ:

Առաջադրած նպատակներից բխում են հետևյալ խնդիրները.

1. օգտագործելով ՏՀՏ գործիքներ՝ ներգրավել բոլոր սովորողներին դասապրոցեսին,
2. կիրառելով գնահատման նոր գործիքներ՝ խթանել սովորողների ակտիվությունը,
3. կիրառելով համագործակցային մեթոդներ՝ մոտիվացնել սովորողներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ



Համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի՝ քննադատական մտածողությունը երկրորդն է 10 կարևորագույն ունակություններից, որոնք անհրաժեշտ են մարդուն : Քննադատական մտածողությունը կարևորագույն նշանակությունն ունի մարդկանց հետ լավ հարաբերություններ հաստատելու, ատելությունից զերծ մնալու ,ներդաշնակ կյանքով ապրելու և լավագույն աշխատանքը գտնելու համար:

Քննադատական մտածողությունը բարդ կարողություն է: Մարդուն ի բնե տրված չէ քննադատաբար մտածել, դա պետք է սովորեցնել, զարգացնել: Այն շատ բարդ գործընթաց է, որովհետև մարդը պետք է պատրաստ լինի ինչ-որ մի փուլում հրաժարվել այն գաղափարներից, որոնք նա ընդունել է ժամանակին: Շատ դեպքերում մարդկանց մեծ մասը չի ուզում սա ընդունել, որովհետև նրանք ուզում են իրականությունը տեսնել այնպիսին , ինչպիսին իրենք ցանկանում են տեսնել:[1]

«Կույր մարդիկ և փիղը»

[1] https://www.facebook.com/FreeCitizenCISC/videos/548648869003028/



«Կույր մարդիկ և փիղը» հին հնդկական առակ է:

Վեց կույր մարդ առաջին անգամ փղի են հանդիպում, նրանցից յուրաքանչյուրը շոշափում է կենդանու միայն մի մասը և կանխատեսում է, թե ինչի է նման փիղը: Առաջինը ձեռքերով դիպչում է կնճիթին ու ասում է. «Սա օձ է»: Երկրորդը շոշափում է փղի կողքը ու եզրակացնում է. «Սա պատ է»: Երրորդը մեկնում է ձեռքերը, հպվում է կենդանու ծնկին. «Սա ծառ է»: Մյուսը շոշափում է ժանիքը. «Սա նիզակ է»: Նա, ով շոշափում է պոչը, ասում է. «Սա պարան է»:

Ու նրանք սկսում են երկար ու թեժ վիճել: Ամեն մեկը մնում էր իր կարծիքին ու փորձում էր համոզել մյուսներին, այն դեպքում, երբ նրանցից յուրաքանչյուրը մասամբ ճիշտ էր, բայց բոլորը սխալ էին:

Մի անցորդ լսում է կույր մարդկանց վիճաբանությունն ու ասում է. «Ինչպե՞ս կարող է ձեզանից ամեն մեկը այդքան վստահ լինել, որ հենց ինքն է ճիշտ: Փիղը վիթխարի կենդանի է: Յուրաքանչյուրդ շոշափել եք նրա միայն մի մասը: Միգուցե եթե դուք բոլոր մասերը կողք կողքի դնեք, կտեսնեք ճշմարտությունը:»

Վեճի բռնվածները մտածում ու ընդունում են, որ անցորդը ճիշտ էր, եթե բոլորի եզրակացությունները կապեն իրար, ամբողջ պատկերը ակնհայտ կդառնա:[2]

Այլ մարդկանց կարծիքները լսելու համար անհրաժեշտ է ունենալ լսելու կարողություն: Յուրաքանչյուրի կարծիքը պարունակում է որոշակի ճշմարտություն, որովհետև յուրաքանչյուր մարդ իրականությունը տարբեր կերպ է ընկալում:

Հանրակրթության նպատակն է կրթել և դաստիարակել գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ:

Քննադատական մտածողությունը պետք է հիմնված լինի գիտելիքի վրա:

[2] https://petrosyaneconomics.wordpress.com/2020/02/18/%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%80-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%AB%D5%AF-%D6%87-%D6%83%D5%AB%D5%B2%D5%A8-%D5%B8%D6%82-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D6%81%D5%A5%D5%AC%D5%B8/

Քննադատական մտածողությունը դասավանդման մեթոդ է: Այն հնարավոր է կիրառել բոլոր առարկաների դասավանդման ժամանակ: Քննադատական մտածողության զարգացումը կարող է սկսվել անգամ ամենափոքր տարիքից՝ մանկապարտեզից:

«Քննադատական մտածողություն» տերմինը սահմանվել է Ամերիկյան փիլիսոփայության ասոցիացիայի կողմից որպես «նպատակաուղղված, ինքնակարգավորող դատողություն, որն ավարտվում է մեկնաբանությամբ, վերլուծությամբ, գնահատմամբ և ինտերակտիվությամբ, ինչպես նաև ակնհայտ, հայեցակարգային մեթոդաբանական կամ ենթատեքստային մտքերի բացատրմամբ, որոնց վրա հիմնված է այդ դատողությունը: Աշակերտի իդեալական քննադատական մտածողությունը սովորաբար կապված է հետաքրքրասիրության, լավ տեղեկացվածության, վստահության պատճառի, ոչ կանխատրամադրվածության, ճկունության, գնահատման մեջ արդարամտության, սեփական կանխակալ կարծիքի հետ բախվելիս ազնվության, դատողությունների մեջ խելամտության հետ, ցանկության հետ վերանայելու, պարզելու խնդիրներն ու բարդ հարցերը, անհրաժեշտ տեղեկություն փնտրելիս հետևողականության, չափանիշներն ընտրելիս խելամտության, այնպիսի արդյունքներ փնտրելու մշտականության հետ, որոնք նույնքան ճշգրիտ են, որքան սկզբնաղբյուրները: Սա մի համադրություն է, որ կապում է քննադատական մտածողության զարգացումը ռացիոնալ և դեմոկրատական հասարակության հիմքերի ըմբռնման հետ:

Քննադատական մտածողությունը ցանկալի վերջնական արդյունք ստանալու հավանականությունը մեծացնող ռազմավարությունը կամ ճանաչողական տեխնիկայի կիրառումն է: Այս սահմանմամբ մտածողությունը բնութագրում է որպես վերահսկելիությամբ, հիմնավորվածությամբ և նպատակասլացությամբ առանձնացվող երևույթ: Այն մտածողության այնպիսի տեսակ է, որին անդրադառնում են խնդիրների լուծման, եզրակացությունների ձևակերպման, հավանական գնահատման և որոշումների ընդունման ժամանակ: Ընդ որում՝ մտածող մարդը կիրառում է այնպիսի հմտություններ, որոնք հիմնավորված և արդյունավետ են կոնկրետ իրավիճակում և լուծվող խնդրի տեսակի համար:

Քննադատական մտածողությունն օգտագործող աշակերտին բնորոշ են հետևյալ հատկությունները՝

- ✓ <u>Պլանավորելու պատրաս տակամություն</u>. մշտապես վարժվելով՝ յուրաքանչյուր ոք կարող է իր մեջ ձևավորել պլանավորելուսովորություն:
- ✓ **Ճկունություն**
- ✓ **Հաստատակամություն.** յուրաքանչյուրը դրսևորում է սեփական սխալներն ուղղելու պատրաստակամություն
- ✓ **Գիտակցում**.այն ենթադրում է նպատակին հասնելու ճանապարհին սեփական գործողությունների դիտարկում: Քննադատաբար մտածող աշակերտները զարգացնում են մտածելու գործընթացի ինքնակառավարման սեփական սովորույթ, փոխզիջումային լուծումների որոնում:

Արդի ժամանակաշրջանում գործունեության խմբային ձևերը գերակշռող են:

Քննադատաբար մտածող աշակերտը անհրաժեշտ է տիրապետի ինչպես զարգացած հաղորդակցման հմտություններին, այնպես էլ մեծամասնությանը բավարարող որոշումներ գտնելու կարողություններին:

Քննադատական մտածողության զարգացման համար կարևոր են և' դասավանդման մեթոդները, և՛ դասավանդվող առարկաները: Նպաստավոր մեթոդներ են համագործակցային և ինտերակտիվ մեթոդները: Համագործակցային մեթոդներըը սովորողներին լայն հնարավորություն են տալիս գաղափարները վերլուծելու, սինթեզելու և գնահատելու:

Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար կարևոր մոդել է Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիան: Բլումի տաքսոնոմիան կոգնիտիվ/մտավոր ունակությունների և կրթական ձեռքբերումների հիերարխիկ դասակարգումն է:

Բլումի տաքսոնոմիա



Իր 40 տարվա ակտիվ մանկավարժական գործունեության ընթացքում Բլումը եկել էր հետևյալ եզրահանգման. **«Այն, ինչ կարող է սովորել ինչ-որ մեկը, կարող են սովորել բոլորը: Ամեն ինչ կախված է նախորդ և ներկա ուսուցման պայմաններից և միջավայրից»**: Ըստ նրա՝

յուրաքանչյուր ուսուցման միջավայրում շատ կարևոր է սկսել ամենացածր մակարդակից և աշխատել բուրգի մակարդակների աստիճանաբար ապահովման ուղղությամբ:

Բլումի տաքսոնոմիայի օգնությամբ հնարավոր երևան հանել այն, ինչ աշակերտները չգիտեն և այն, ինչ հարկավոր է՝ սովորեն բարձր մտավոր ունակությունների ձեռքբերման համար: [3]

Գիտելիքի ձեռքբերման մակարդակում սովորողը կարող է հիշել, տարբերակել, մտաբերել կամ գտնել ուսուցման ընթացքում ներկայացված յուրահատուկ տեղեկատվությունը: Այն կարող է դրսևորվել փաստերի, կանոնների, դիագրամաների, ձայնի և այլնի միջոցով: **Ընկալման** մակարդակում սովորողը կարող է ցույց տալ, որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի կամ ճանաչել դրա վերափոխված տարբերակը: Այն կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով բացատրության, ամփոփման, օրինակ բերելու և այլ ձևերով: Տաքսոնոմիայի **կրրառման** մակարդակում սովորողը կարող տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ գործողությունները կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն: Չորրորդ մակարդակում, որը ենթադրում է **վերլուծություն**, սովորողը կարող ճանաչել տեղեկատվության հիմնական կազմվածքն ու կառուցվածքը, տրոհել բաղկացուցիչ մասերի և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող տարբերել փաստերը ենթադրություններից: Բլումի տաքսոնոմիայի հինգերորդ մակարդակը վերաբերում է **գնահատմանը,** այս մակարդակում սովորողը կարող է որոշակի չափորոշիչներ կիրառել՝ օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անելու համար: Եվ վերջապես վերջին՝ **ստեղծման** մակարդակում սովորողը կարող է տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր անհատական նյութը, տեսակետը, դիրքորոշքումը ձևավորելու նպատակով:

Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ սովորողներին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության, ստեղծման և գնահատման մակարդակները: Բլումի տասքոնոմիայի մակարդակները դասավորված են

[3] https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy

աճման կարգով, այսինքն՝ նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում:[4]

Քննադատական մտածողության նպաստավոր մեթոդներից են՝

Էվրիստիկ հարցերի մեթոդը, որն ուղղված է սովորողների իմացական ակտիվության և ուսումնա-մասնագիտական գործունեության խթանմանը, ինչը թույլ կտա սովորողների կողմից գիտելիքների պասիվ յուրացումից անցնել դրանց ակտիվ կիրառմանը մասնագիտական գործունեության մեջ: Էվրիստիկ հարցերն ուղղված են ինչպես գիտելիքների խորացմանը (օրինակ՝ ո՞րն է գլխավոր գաղափարը, սահմանե՛ք կամ … , ձևակերպե՛ք… և այլն), կարողությունների զարգացմանը հատուկ հարցերի միջոցով (օրինակ՝ ինչպե՞ս կիրառել, բերե՛ք օրինակներ, նկարագրե՛ք… և այլն), և ստեղծագործական կարողությունների ու քննադատական մտածողության զարգացմանը (օրինակ՝ ինչպե՞ս լուծել այլ միջոցով, գտե՛ք սխալները և այլն):

Բանավեճ: Ուսումնական բանավեճը նպատակաուղղված խմբային քննարկում է որևէ կոնկրետ հիմնախնդրի, որի ընթացքում տեղի է ունենում գաղափարների, կարծիքների փոխանակում: Ուսումնական բանավեճի արդյունավետությունը պայմանավորված է հիմնախնդրի արդիականությամբ, ուսուցչի վարպետությամբ բանավեճի անցկացման հարցում, մասնակիցների տեղեկացվածությամբ:

Բանավեճն անցկացվում է 3 փուլով.

- I փուլ-կողմնորոշման փուլ, մասնակիցներն ադապտացվում են միմյանց նկատմամբ, որը թույլ է տալիս ճիշտ ձևակերպել հիմնախնդիրը և նպատակը, ծանոթացնել բանավեճի անցկացման կանոնների և կանոնակարգի հետ:
- II փուլ-գնահատման փուլն է, մասնակիցների ելույթները, նրանց պատասխանների, մտքերի, առաջարկությունների քննարկումը:

[4] https://drive.google.com/file/d/1FylVepf6duFUdxaIj2UeOE5d165Xcp2-/view?usp=sharing

- III փուլ- փոխհամաձայնության փուլ, որի ժամանակ վերլուծվում են ստացված արդյունքները, համաձայնեցվում են կարծիքները, դիրքորոշումները, համատեղ ձևակերպվում են որոշումները:

Դերային խաղ Դա մասնագիտական գործունեության մոդելավորման միջոց է, միևնույն ժամանակ արդյունավետ ուսուցման միջոց: Կրթական գործընթացում այն ունի հետևյալ նպատակները. իմացական և մասնագիտական հետաքրքրությունների, դրդապատճառների, համակարգային մտածողության, թիմային աշխատանքի հմտությունների ձևավորում, մասնագիտության նկատմամբ հարգալից վերաբերմունքի դաստիարակում և այլն:

Քեյզ մեթոդ (կոնկրետ իրավիճակների վերլուծություն): Այս մեթոդը ուսումնասիրության, վերլուծության և որոշման ընդունման մեթոդ է իրավիճակի նկատմամբ, որն ի հայտ է եկել կոնկրետ կազմակերպության և կոնկրետ ժամանակահատվածում: Այս աշխատանքի փուլերն են.

- դասախոսի կողմից ներածական խոսքի և հիմնական հարցերի ներկայացում,
- մասնակիցներին խմբերի բաժանում, ղեկավարի կամ լիդերի ընտրություն,
- իրավիճակի տեքստի անհատական ուսումնասիրում,
- խմբային բանավեճերի, վերլուծությունների, որոշումների ընդունում,
- դասախոսի եզրափակիչ խոսքը, վերլուծությունը, գնահատումը:

Թրեյնինգ: Սա ինտերակտիվ ուսուցման մեթոդ է, որի նպատակն է զարգացնել միջանձնային և մասնագիտական վարքագծերի հաղորդակցման կոմպետենցիաները: Թրեյնինգին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- մասնակիցների օպտիմալ թվի ընտրություն,
- հատուկ լսարանում անցկացում կամ նստարանների հատուկ դասավորում,
- մասնակիցներին նպատակների, խնդիրների ու կանոնների հետ ծանոթացում,
- հարգալից վերաբերմունք միմյանց նկատմամբ,
- մասնակիցների խրախուսում,
- արդյունքների ամփոփում:

Ուսուցման այս մեթոդի կիրառությունը տեղի է ունենում **3 փուլով**.

- Մասնագիտական գիտելիքների տրամադրում: Այս փուլում տալիս են պատասխաններ այն հարցերին, որոնք շատերի մոտ առաջացրել են դժվարություններ, հետո դասախոսի կամ մարզչի կողմից կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ. դերային խաղեր, բանավեճեր և այլն:
- Գործնական հմտությունների ձևավորման փուլ , որի նպատակն է ստացած բոլոր տեսական գիտելիքների հիման վրա ձևավորել գործնական կարողություններ և հմտություններ: Այս փուլում յուրաքանչյուր մասնակից պետք է ձեռք բերի գործնական փորձ սեփական կյանքի ու առողջության պաշտպանության, ինչպես նաև շրջապատի նկատմամբ: Այս նպատակով անցկացվում են դերային խաղեր, բանավեճեր:
- Արդյունքների ամփոփում, որն ուղղված է հետևյալ նպատակին՝ յուրաքանչյուր մասնակից պետք է կիսվի իր տպավորություններով, զգացողություններով: Կարելի է այս փուլն անցկացնել անկետաների լրացման տեսքով: Մարզիչը դիմում է մասնակիցներին այսպիսի հարցերով. ի՞նչ նոր բան իմացաք, ո՞րն էր հետաքրքիր և օգտակար Ձեզ համար և այլն:

Մտագրոհ: Այս մեթոդը խրախուսում է ուսանողների մտավոր աշխատանքը: **Առաջին փուլում** խմբերին ներկայացվում է հիմնախնդիր քննարկման համար: Մասնակիցները հերթով տալիս են ցանկացած առաջարկություններ համառոտ ձևով: Կազմակերպիչը բոլոր առաջարկությունները գրում է գրատախտակին՝ առանց որևէ մեկնաբանության: **Երկրորդ փուլում** քննարկվում են բոլոր առաջարկությունները: Երրորդ փուլում խումբը պատրաստում է նախօրոք պայմանավորված ձևով ամենաարդյունավետ որոշումը, մի քանի հաջող առաջարկություններ և այլն:

Կարելի է նաև մասնակիցներին բաժանել հետևյալ խմբերի.

- գաղափարներ ստեղծողների խումբ, որոնք առաջարկում են հիմնախնդրի լուծումներ,
- քննադատողների խումբ,
- վերլուծողների, որոշում ընդունողների խումբ:[5]

[5] https://elearning.iedf.am/course/view.php?id=583#section-6

Մտագրոհը դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:[6]

Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն:

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

Հարցեր:

Հարցեր, որոնք հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման:

Ինչո՞վ X-ն ու Y-ը իրար նման:

Ո՞րն է նյութի հիմնական գաղափարը:

[6] https://drive.google.com/file/d/1XYfXBQCWMwmv4b-6JyTRX3jmTdOWrpsn/view?usp=sharing

Որո՞նք են X-ի ուժեղ և թույլ կողմերը։

Ինչպե՞ս է X-ը կապված Y-ի հետ։

Համեմատե՛ք X-ն ու Y-ը՝ ըստ Z չափանիշի։

Որո՞նք են խնդրի լուծման տարբերակները։

Ի՞նչը չեք հասկացել։

Դասի զեկուցող:

Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում։

Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող։ Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին։

Ես-Դու-Մենք:

Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում։ Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում։ Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը։ Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը։

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում։ Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը։ Սովորողները հարցադրումներին հետևում և պատասխանները նշում են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ։ Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները։

Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը, և՛ ճշտությունը։ Վարժություններ ստեղծելիս

հնարավոր է բազմակի ընտրանք ձևաչափով հարցադրումներ կազմել: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:

Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնելու հետևյալ աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ,
- պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց,
- առցանց հետևել սովորողների առաջադիմությանը,
- հղմամբ տարածել պատրաստի վարժությունները,
- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ,
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը: [7]

Այսօր՝ ՏՀՏ-ների կիրառման դարաշրջանում, շատ կարևոր է դասերն իրականացնել ՏՀՏ-ներով՝ դասերն առավել հետաքրքիր, ներգրավված դարձնելու նպատակով: Յուրաքանչյուր դասարան տարբեր է, նույն թեման տարբեր դասարաններում տարբեր է, աշակերտների մոտիվացիան ցածր է, ներգրավվածությունը՝ քիչ: Դա է պատճառը, որ մենք՝ ուսուցիչներս, պետք ՝ դասերը կազմակերպենք հետևյալ ՏՀՏ գործիքների կիրառմամբ.

- Quizizz
- Edpuzzle
- Canva
- Miro
- Linoit
- Wisemapping
- Popplet
- Learningapps
- Padlet և այլն:

[7] https://drive.google.com/file/d/1XYfXBQCWMwmv4b-6JyTRX3jmTdOWrpsn/view?usp=sharing

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ Արմավիրի մարզի «Վաղարշապատի » ՊՈԱԿ-ում: Այստեղ աշխատում եմ 5 տարի: Փորձարարական դասերն անցկացրել եմ իմ դասավանդած 9-րդ և 11-րդ դասարաններում: 9-րդ դասարանում սովորում է 8 աշակերտ, իսկ 11-րդ դասարանում՝ 9:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1



ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 3

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

1-ին փորձարարական դասն իրականացրել եմ 11-րդ դասարանում, որտեղ սովորում է 9 աշակերտ: Դասի թեման էր «Սպանված աղավնին» վիպակի կերպարները: Դասն անցկացրել եմ համակարգչային դասարանում: Բոլորն ակտիվ մասնակցեցին դասին: ՏՀՏ-ների և ժամանակակից մեթոդների կիրառումը դասն ավելի արդյունավետ դարձրեց, ներգրավվեցին բոլոր աշակերտները: Կարողացանք նաև բանավեճի մեթոդ կիրառել. նկատելի էր, որ սովորողները անկաշկանդ արտահայտում էին իրենց մտքերը, ներկայացնում իրենց դիրքորոշումը: Հետաքրքիր էր նաև մտագրոհի արդյունքը՝ սեր-ը քննելով դարձրին վրեժ (նկար 1): Գնահատումն իրականացրի Quizizz-ով: Հրաշալի մեթոդ է ժամանակի մեջ տեղավորվելու համար: Կարծում եմ այսօր նպատակս արդարացված է:



Նկար 1

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Դասն անցկացրել եմ 9-րդ դասարանում, որտեղ սովորում է 8 աշակերտ: Թեման է «Սասնա ծռեր» էպոսի կերպարները: Թեման սիրելի է և հոգեհարազատ: Սովորողները կարողանում են արտահայտել իրենց մտքերը: Բաժանվեցին 2 խմբի, կատարեցին հանձնարարությունները: Այս դասարանում կան աշակերտներ, որոնք խմբային աշխատանքի ժամանակ դժվարանում են իրար լսել և ընդունել մյուսների կարծիքները: Կշռադատման փուլում ընդգրկված մեթոդը (Դասի զեկուցող) ավելի պատասխանատու դարձրեց խմբերի անդամներին: Կարծում եմ խմբային աշխատանքները ավելի պատասխանատու են դարձնում բոլորին, յուրաքանչյուրի աշխատանքից է կախված ընդհանուրի արդյունքը:

Գնահատման համար ընտրված խաղ-թեստը ստիպում է սովորողին ավելի արագ մտածել և գործել:

Կարծում եմ, որ ՏՀՏ-ով դաս ավելի հաճախ անցկացնելու դեպքում աստիճանաբար կնվազեն թերությունները, որոնք ծագում են ընթացքում:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 3

Դասը կրկին անցկացրել եմ 11-րդ դասարանում: Թեման է «Անուշ» պոեմի բովանդակությունը: Ընտրված մեթոդները (մտագրոհ, ես-դու-մենք, երկու բան) նպաստում են համագործակցային կարողությունների և քննադատական մտքի ձևավորմանը: Նյութը դառնում է տեսանելի: Իսկ ՏՀՏ-ների կիրառումը ավելի է մոտիվացնում սովորողներին, նպաստում է նաև արագ կողմնորոշվելուն, ժամանակի ճիշտ կառավարմանը, ձևավորում է դիմացինին լսելու կարողություն:

Այն աշակերտները, որոնք պասիվ էին, իսկ երբեմն՝ լսողի դերում, մեթոդների և ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դառնում են ակտիվ, արտահայտում են սեփական կարծիքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսօր հանրակրթության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլ նաև քննադատական, ստեղծագործ, կողմնորոշվող քաղաքացի ձևավորելն է: Իսկ նման քաղաքացի ձևավորելու համար անհրաժեշտ է ունենալ նորարար ուսուցիչ, որը, դասաժամերին կիրառելով ՏՀՏ-ներ, տարբեր մեթոդներ, կկարողանա բոլոր սովորողներին ներգրավել դասապրոցեսին, կձևավորի վերլուծելու, սեփական կարծիքը հայտնելու կարողություններ:

Աշխատանքիս մեջ ներկայացրել եմ հետազոտական 3 դաս: Հետազոտությունը ցույց տվեց, որ սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին, մոտիվացիան, համագործակցելու, քննադատական և վերլուծական հմտությունների ձևավորումը, սեփական կարծիքը հայտնելու և եզրահանգումներ անելու կարողությունների զարգացումը մեծապես կախված է նաև ուսուցչի կատարած պլանավորումից, նրա կիրառած մեթոդներից, դասի տարբեր փուլերում ՏՀՏ-ների կիրառումից, գնահատման ձևերի բազմազանությունից: Խնդիրներ, իհարկե, կհանդիպեն, սակայն պետք է զինվել համբերությամբ և միշտ զբաղվել ինքնազարգացմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.facebook.com/FreeCitizenCISC/videos/548648869003028/
2. https://petrosyaneconomics.wordpress.com/2020/02/18/%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%80-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%AB%D5%AF-%D6%87-%D6%83%D5%AB%D5%B2%D5%A8-%D5%B8%D6%82-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D6%81%D5%A5%D5%AC%D5%B8/
3. https://elearning.iedf.am/course/view.php?id=583#section-6
4. https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy
5. https://drive.google.com/file/d/1FylVepf6duFUdxaIj2UeOE5d165Xcp2-/view?usp=sharing
6. https://drive.google.com/file/d/1XYfXBQCWMwmv4b-6JyTRX3jmTdOWrpsn/view?usp=sharing